Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ՝ Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին

Ուսուցիչ ՝ Ծովինար Հովհաննիսյան

Ղեկավար ՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ 6
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....13
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ուսուցիչ իր աշխատանքային կենսագրության ընթացքում փորձում է կատարելագործել ուսուցման մեթոդներն ու հնարները ՝ ցանկալի արդյունքի հասնելու համար:Իր անցնելիք ճանապարհին նա ավելի է հմտանում,նոր գիտելիքներ ձեռք բերում և դրանք սաներին հաղորդելու արդյունավետ ձևեր մշակում:

Ուսուցիչը,եթե նա ազնիվ է,միշտ պետք է ուշադիր աշակերտ լինի: Մ.Գորկի

Վերջին տասնամյակներում սկիզբ առած կրթական բարեփոխումների ալիքը,ի թիվս այլ նորարարությունների,առաջադրեց աշակերտների ձեռք բերած գիտելիքները գործնականորեն կիրառելու կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման կարևոր պահանջ:Տրված գիտելիքը չի կարող ինքնանպատակ լինել,գիտենք բոլորս,բայց ավանդաբար դրա գործնական կիրառման փորձառությունը թողնում ենք կյանքին:

Այսօր փոխվել է վերաբերմունքը կրթության նկատմամբ,հետևաբար փոխվել են նաև պահանջները:

Գիտենք,որ կրթության նպատակն է դարձել աշակերտի ընդհանուր մշակութային,անձնային և ճանաչողական զարգացումը,որը կապահովի սովորել սովորելու կարողությունը:Հետևաբար,կրթության ժամանակակից նպատակների իրագործման համար ուսուցիչը պետք է փնտրի և գործադրի նոր հնարներ,մոտեցումներ:Տարրական կրթության ծրագիրը նպատակաուղղվում է կրթության բովանդակության մեջ զգալի նշանակություն ունեցող ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից է աշակերտին կարողանալ սովորեցնել ուսուցման պրոցեսում ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում ՝ տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական ենք անվանում այն աշխատանքերը,որոնք կատարվում են սովորողների կողմից,որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների,կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Որպես ուսուցիչ՝ մեզ համար կարևոր է, որ գործնական աշխատանքի արդյունքում աշակերտների կողմից ստեղծված նյութերը չլինեն ինքնանպատակ: Պատրաստված և նախատեսված պարագաները չլինեն մեկանգամյա օգտագործման համար, այլ դառնան ուսումնական նյութ,որը հետո տարբեր առիթներով կարելի է կիրառել: Իսկ դա նշանակում է, որ աշակերտներն իրենց ձեռքով պատրաստված նյութերը հավաքում են,դասակարգում,համադրում,քննարկում, համատեղ որոշում իրենց աշխատանքը ներկայացնելու եղանակները:

Այն ուսուցիչը, որը կարողանում է իր սաներին օժտել աշխատանքի մեջ ուրախություն գտնելու ունակությամբ,արժանի է դափնեպսակի: Է. Հաբարդ

Գործնական աշխատանքի նպատակն է՝ աշակերտներին հնարավորություն տալ ցուցադրելու յուրացրածը: Դա հնարավոր է ինքնուրույն որևէ հանձնարարության կատարմամբ, որը վկայում է, որ դպրոցում սովորածը կարելի է կիրառել կյանքում:Կարևոր է աշակերտների տրամաբանական մտածողության զարգացումը:Դրա համար նախ պետք է զարգացնել նրանց զգայարանները,հետո դատողությունը: Տեղին է նկատել չեխ փիլիսոփա-մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին. <<Գիտելիքը սկսվում է զգայական ընկալումից, երևակայության օգնությամբ անցնում է հիշողությանը,իսկ այնուհետև ձևավորվում է ընդհանուրի ըմբռնումը, և բավականաչափ հասկանալի իրերի մասին առկա գիտելիքի ճշգրտման համար կազմվում են դատողություններ>>:

Հարկավոր է ընկալմանը մասնակից դարձնել արտաքին զգայարանները ՝ լսողությունը,տեսողությունը,շոշափելիքը և այլն: Դրանց զարգացմանը մեծապես օգնում են գործնական աշխատանքները:

Գործնական աշխատանքն ավելի լիարժեք և շահեկան է դառնում, երբ դրան մասնակցում են նաև ծնողները:

Երբ ծնողներին մասնակից ենք դարձնում ամբողջ գործընթացին՝ դրական վերաբերմունք ենք ձևավորում մեր ընդհանուր գործի նկատմամբ, մյուս կողմից՝ աշակերտների համար բարենպաստ պայմաններ ստեղծում տեխնիկական աջակցություն գտնելու հարցում:

Գործնական աշխատանքն ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է, իսկ դրա արդյունավետ կազմակերպումը՝ ուսուցչի կարևորագույն խնդիրներից մեկը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Հանրակրթության պետական կրթակարգում ասված է. <<Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է>>:

Տարրական դպրոցի այսօրվա գերխնդիրը ոչ թե սովորողին գիտելիքներով զինելն է, այլ անձի կարողությունների, հմտությունների ու արժեքային համակարգի ձևավորումը, նրա ներուժի բացահայտումն ու զարգացումը: Կրտսեր դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա հաղորդակցվել հայերենով,ընկալել ուրիշների խոսքը,կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր: Միաժամանակ նա պետք է տիրապետի սովորելու հիմնական հմտություններին,դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ, լինի նախաձեռնող,կարողանա աշխատել համագործակցված, ունենա համակարգչային տարրական գրագիտություն, կարողանա ճիշտ գնահատել իր հնարավորությունները, ձևավորի օբյեկտիվ ինքնագնահատական, դրսևորի աշխարհաճանաչողության գործուն և առողջ հետաքրքրասիրություն:

Տարիների աշխատանքային փորձով համոզվել ենք, որ գոյություն ունի անմիջական կապ կրթության բովանդակային երեք բաղադրիչների (գիտելիքի կարողություններ, հմտություններ, արժեհամակարգի) միջև: Դրա համար, որպեսզի գիտելիքը դառնա կարողություն, իսկ հետո նաև հմտություն, պետք է գործնականում կիրառել այն, քննել-համադրել-վերլուծել-դատողություններ անել: Այնուհետև սեփական կարծիք ու վերաբերմունք ձևավորել:

Տարիներ շարունակ ուսումնական պրոցեսում գլխավոր շեշտադրում է կատարվել սովորողներին տեսական գիտելիքների մեծ պաշար հաղորդելու փաստի վրա:

Յան Կոմենսկին ասել է.

<<Ուսուցման մեջ սովորել ու չսովորեցնել նույնն է, ինչ վազքի մեջ ոտքը չծալել>>:

2000-ական թվականներից սկսած՝ կրթական բարեփոխումների նպատակն է, որ այժմ սովորածը գործնականում կիրառելուց զատ՝ կարևորվի ուսուցման գործնական եղանակը: Այսինքն աշակերտները սովորում են գործելով, ինչ որ բան փորձարկելով, այսինքն՝ ուսումնական գործողությունների և վարժությունների կատարման արդյունքում:

Գործնական աշխատանքների ընթացքում իրականացվում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների հմտությունների ձևավորումը և զարգացումը,գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Գործնական աշխատանքը կարելի է համարել մանկավարժական երևույթ,ուսումնական առաջադրանք: Մայրենիի դասը պլանավորելիս հմուտ ուսուցիչը երկու կարգի գործողություն պետք է նախատեսի.

- ուսուցողական-հետազոտական. Այդ գործընթացի ժամանակ աշակերտները հնարավորություն են ստանում սեփական ուժերով և փորձով կառուցելու (հայտնագործել, կառուցել) գիտելիքը:
- ամփոփիչ, երբ աշակերտները, կիրառելով իրենց սովորածը, կոնկրետ առաջադրանք են կատարում, որի ընթացքում զարգացնում են իրենց կարողությունները, հմտանում գործնական աշխատանքի շնորհիվ:

Ուսուցողական-հետազոտական աշխատանքն առանձին առաջադրանքների տեսքով սովորաբար կազմակերպվում է յուրաքանչյուր դասի ժամանակ:

Ամփոփիչ աշխատանքի կիրառումն արդյունավետ է մեծ թեմաների ամփոփման ժամանակ:

Երեխաներն ու նրանց ծնողները գործնական աշխատանքի մասին տեղեկացվում են թեմայի ուսուցման սկզբում: Այդ ժամանակ տրվում են առաջադրանքներ և նշվում կատարման ժամկետը:

Հաշվի առնելով թեմայի ծավալը և բովանդակությունը, ուսուցիչը կարող է գործնական աշխատանքը զուգորդել ամփոփման դասի հետ: Այդ ժամանակ կազմակերպվում է մրցույթ-ստուգատես և ավելի արդյունավետ է լինում:

Յուրաքանչյուր ուսուցիչ գործնական աշխատանքի տեսակը որոշելիս կամ ընտրելիս պետք է հաշվի առնի մի շարք հանգամանքներ.

1. ի՞նչ գիտելիքներ են հարկավոր աշխատանքը կատարելու համար,
2. ի՞նչ նյութեր են անհրաժեշտ,
3. աշակերտն ու՞մ հետ կարող է համագործակցել,
4. ե՞րբ և ի՞նչ խորհրդատվության կարիք կարող է ունենալ:

Գործնական աշխատանքի մասին տեղեկացվելիս նրանք պետք է հստակ պատկերացում ունենան,թե ինչ է պահանջվում իրենցից: Աշակերտներն այս դեպքում աշխատանքի կազմակերպման նախապատրաստական փուլում են: Այդ ժամանակ աշակերտներն ավելի շատ են խորհրդատվության կարիք ունենում:

Ուսուցիչը խորհրդատվության ընթացքում ոչ թե ուղղակի և սպառիչ պատասխաններ է տալիս աշակերտների հարցերին, այլ ուղղորդում է նրանց, մեկնաբանում,բացատրում և աջակցում, երբեմն նաև նոր հարցեր հավելում՝ մղելով նրանց ինքնուրույն հետազոտական աշխատանքի: Այս ձևով ուսուցիչն օգնում է իր աշակերտներին սովորել, իմացածը համակարգել և այն կիրառել կոնկրետ առաջադրանքներ կատարելիս:

«Մարդուն անընդհատ սովորեցնելով յուրացնել պատրաստի գիտելիքներ՝ հնարավոր է բթացնել նրա ստեղծագործական ընդունակությունները, մոռացնել տալ ինքնուրույն մտածելը»: *Դիստերվերգ*

Բոլորին հայտնի է, որ նոր գիտելիքներ կարելի է ստանալ պատրաստի վիճակում, ուրիշներից լսելով, բայց առավել հաճելի է դրանք ձեռք բերել ինքնուրույն աշխատանքի շնորհիվ: Ցանկացած հետազոտական աշխատանք ցանկալի է սկսել ինքնուրույն մտածելու գործողությունից:

Յուրաքանչյուրն ինքն իրեն կարող է տալ հետևյալ հարցերը.

1. ի՞նչ գիտեմ այդ մասին,
2. ի՞նչ մտքեր կարող եմ արտահայտել այդ մասին,
3. ի՞նչ եզրահանգումներ կարող եմ կատարել ինձ հայտնի տեղեկություններից:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից նախատեսվում են տարբեր տիպի և բնույթի գործնական աշխատանքներ.

- պատմության գծապատկերի կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով,
- բառերի, վանկերի կազմության գծապատկերներ,
- դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ,
- տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում,
- գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն,
- դասարանական թերթ, գովազդային վահանակ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ,
- տեքստի նկարազարդում,
- հեքիաթների հորինում, ինքնաշեն գրքերի նկարազարդում,
- զանազան տեղեկատվական աղբյուրներից համապատասխան տեղեկությունների որոնում՝ առաջադրված հարցերն պատասխանելու համար:

Երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտություններ ուսուցանելն առաջին դասարանում դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է:

Ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը՝ որպես ճանաչողական հետաքրքրության զարգացման և ուսումնական գործունեության նկատմամբ դրդապատճառների ստեղծման միջոց:

Գործնական աշխատանքի ընթացքում լուծվում են շատ խնդիրներ.

- ճանաչողական գործընթացների զարգացում (երևակայություն,ընկալում,հիշողություն), մտածական գործընթացների զարգացում (համեմատում, վերլուծություն և գլխավորի առանձնացում, նյութի ամփոփում և համակարգում),

- հետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում. տեսնել անսովորը, ապացուցել գաղափարը, ձևավորել հետազոտական աշխատանքի արդյունքները,
- ինքնակրթության կարողությունների ձևավորում, այսինքն ՝ ակտիվ ճանաչողական գործունեության հնարքների ձևավորում,
- սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացում,
- համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում:

Առաջին դասարանը գործնական կարողությունների զարգացման առաջին փուլն է: Այս դասարանում գործնական աշխատանքը կրում է սոսկ ուսուցողական բնույթ: Այդ ժամանակ աշխատանքը հիմնականում նպատակաուղված է երևակայության, ստեղծագործական մտածողության, հարցեր տալու կարողությունների զարգացմանը: Կարելի է հանձնարարել տարբեր առաջադրանքներով վարժություններ, որոնք կնպաստեն սեփական կարծիքը փոխելու, իրերն ու երևույթները տարբեր կողմերից դիտարկելու կարողությունների զարգացմանը, որն էլ իր հերթին գործնական աշխատանքն արդյունավետ կատարելու հնարավորություն է ընձեռնում:

Գործնական առաջադրանքներն ու վարժությունները ճանաչողական–հետազոտական և ստեղծագործական գործընթացների սկիզբն են:

Երկրորդ դասարանում կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ,որոնք պետք է կառուցված լինեն մի շարք գործնական վարժություններից:

Այդ գործընթացի ժամանակ աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ պետք է հնարավորություն, ստեղծագործական միտք և մոտեցում, որպեսզի կարողանա լուծել իր առջև դրված խնդիրը: Այս դեպքում պետք է գործնական աշխատանքը կազմված լինի այնպիսի առաջադրանքներից, որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության: Այստեղից հետևություն՝ գործնական աշխատանքն ուսումնական գործընթացի ժամանակ յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Գործնական աշխատանքները 2-4 դասարանում նպաստում են ոչ միայն յուրացված գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը, այլև մտածողական գործընթացների զարգացմանը:

Դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները մեծ հաշվով կարելի է անվանել ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ:

Անհրաժեշտ է զարգացնել ստեղծագործելու կարողություն: Այսինքն՝ երեխաների հաջողությունը ստեղծագործական գործունեության ընթացքում ապահովող որակների ձևավորումն ու զարգացումը պետք է դիտարկել որպես հատուկ մանկավարժական խնդիր:

Հետազոտական աշխատանքի ընթացքում երեխան սովորում է դիտարկել, համեմատել, խորհել, տարբերակել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ և այլն:

Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում աշակերտները պետք է կիրառեն տարբեր մեթոդներ և հնարներ: Մեթոդների ընտրությունը և կիրառումը որոշվում է երեխայի տարիքային առանձնահատկությամբ և այլ կրթադաստիարակչական նպատակներով,որոնք առաջադրել է ուսուցիչը:

Տարրական դասարաններում հետազոտական գործունեությունն ունի իր առանձնահատկությունները.

- նպատակաուղղված է այնպիսի գիտելիքների յուրացմանը, որոնք հետաքրքրում են սովորողներին և ծրագրային պահանջների շրջանակում չեն,
- օգնում է յուրացնելու այնպիսի հետազոտական կարողություններ,որոնք անհրաժեշտ են նրան ամբողջ կյանքի ընթացքում,
- զարգացնում է հաղորդակցական կարողությունները,
- ընթանում է ուսուցչի և սովորողների ստեղծագործական համագործակցությամբ:

Տարրական դասարաններում գրեթե բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ: Թեման որոշում է ուսուցիչը,բայց յուրաքանչյուր աշակերտ իր ներդրումն է ունենում ընդհանուր գործի մեջ: Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել ընդհանուրից:

4-րդ դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտական թեման:Այդ ժամանակ ուսուցիչը պետք է միայն ուղղորդի և աջակցի:

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են ՝

- ըստ աշակերտների քանակի՝ անհատական, զույգով, խմբային,
- ըստ անցկացման վայրի ՝ դասարանական և արտադասարանական,
- ըստ ժամանակի ՝ երկարատև, կարճատև,
- ըստ թեմայի ՝ առարկայական, ազատ:
- ըստ խնդրի ՝ դասի ընթացքում ուսումնասիրված ծրագրային նյութի յուրացման խորացում և հարցեր,որոնք ծրագրային նյութ չեն:

Վերջին ժամանակներս կրտսեր դպրոցականների ստեղծագործական և հետազոտական կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով հաճախակի կիրառվում է նախագծերի մեթոդը կամ նախագծային աշխատանքը:

Նախագծային աշխատանքի էությունն այն է,որ աշակերտները,իրենց հետաքրքրությունից ելնելով, ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր: Պետք է հիշել՝ նախագծային և հետազոտական գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով, բնույթով և գործունեության տեսակների բովանդակությամբ:

Հետազոտությունը ճշտության որոնումն է, իսկ նախագիծը ՝ կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծում:

Նախագծային-հետազոտական գործունեությունը սեփական հետազոտության նախագծման գործունեությունն է, որը ենթադրում է նպատակների և խնդիրների առկայություն, համապատասխան մեթոդների ընտրության սկզբունքներ, տվյալ աշխատանքի ընթացքում ճիշտ պլանավորում, հետազոտության իրականացման գնահատում, հետազոտության արդյունքների ներկայացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Այսօր ժամանակակից մանկավարժությունն ուսուցման և դասավանման գործընթացն արդի կյանքի պահանջներին համապատասխանեցնելու, առավելագույնս անձնակենտրոն դարձնելու նպատակ ունի: Ուսուցման գործընթացում այսօր կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերումը, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների ձևավորում:
2. Մենք ձգտում ենք ուսմնական գործընթացը կազմակերպել այնպես, որ ցանկացած աշակերտ ներգրավված լինի առօրյա կյանքում իրականացվող տարբեր ծրագրերում՝ ստուգելով ու կիրառելով իր հաղորդակցման, թիմային աշխատանքի հմտությունները,կողմնորոշելով հետագա քայլարշավին:
3. Գործնական աշխատանքներն ունեն ոչ միայն ուսումնական նպատակ , այլև կարող են տալ կիրառելի և անհրաժեշտ արդյունքները: Գործնական աշխատանքները զարգացնում են աշակերտների հաղորդակցության և ներկայացման կարողությունները, կազմակերպման և ժամանակի կառավարման,ուսումնասիրության և հետազոտման, ինքնագնահատման և ինքնարտա-հայտման, խմբային աշխատանքի հմտությունները:
4. Մայրենի լեզվի ուսուցումը որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Գործունեություն, որն իր շարունակությունն է ունենում գործնական աշխատանքների ժամանակ՝ նպաստելով սովորողի բնականոն, անկաշկանդ ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջուլիետա Գյուլամիրյան «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», «Զանգակ-97» Երևան, 2016թ.:
2. Կարինե Թորոսյան,Հեղինե Խաչատրյան «Վեց տարեկան դպրոցականների մեկնարկ, նամակ ԿԱԻ» Երևան, 2007թ.:
3. Կարինե Թորոսյան,Կարինե Չիբուխչյան «Գործնական աշխատանքներ մայրենիից» Զանգակ, 2012թ.:
4. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, (1-9 դասարաններ), 2011թ.: